Տեղեկացնում **ենք, որ ՌԴ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը (ՄՄՀՊԻ /МГИМО/)** /Առդիր 1/ և **ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիան** /Առդիր 2/ հայտարարում են 2023/2024 թթ. ուսումնական տարվա համար ընդունելություն:

2023/2024 թթ. ուսումնական տարվա համար **ՄՄՀՊԻ-ի** կողմից ՀՀ-ին հատկացված քվոտաների ընդհանուր քանակը 9-ն է՝ 5 բակալավրիատի, 3 մագիստրոսական և 1 ասպիրանտուրայի ծրագրերի դիմելու հնարավորությամբ:

ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի կողմից 2023/2024 ուսումնական տարվա համար ընդունելությունը նախատեսվում է միայն մագիստրագուրայի և ասպիրանտուրայի ծրագրերով: **ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիան** տրամադրում է սահմանափակ քանակությամբ տեղեր՝ կախված ընդունելության քննություններում դիմորդների արդյունքներից:

Հայտնում ենք, որ ՀՀ-ին հատկացված քվոտաներով նշված ԲՈՒՀ-ում ուսումն անվճար է, սակայն ուսումնառության ամբողջ ընթացքում կեցության հետ կապված ծախսերը, ինչպես նաև ճանապարհածախսը պետք է հոգան մասնակիցները: Հանրակացարաններում բնակությունը՝ տեղերի առկայության պարագայում, նույնպես վճարովի է:

Վերը նշված ԲՈՒՀ-երի ուսումնական ծրագրերին դիմելու համար ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր ներկայացնելու **<u>վերջնաժամկետն է 2023 թ. ապրիլի 27-ը:</u>** Անհրաժեշտ փաստաթղթերը պետք է փոխանցվեն secretariat@mfa.am էլ. հասցեին:

ՀՀ ԱԳՆ ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.

- դիմում ՀՀ ԱԳ նախարարի անունով,
- ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
- ատեստատի պատճենը (բակալավրիատի դեպքում) /դիպլոմի պատճենը (մագիստրատուրայի և ասպիրանտուրայի դեպքում)՝ ներառյալ ներդիրները,
- արական սեռի դիմորդների պարագայում՝ կցագրման վկայականի կամ զինվորական գրքույկի պատճենները,
- ինքնակենսագրություն՝ շարադրված ազատ ոճով,
- 2 գունավոր լուսանկար 3X4 չափսի:

ԱՌԴԻՐ 1

ՌԴ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտն (**ՄՄՀՊԻ /МГИМО/**) առաջարկում է կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով՝

1. Միջազգային հարաբերություններ	(բակալավրիատ/մագիստրատուրա)
2. Տարածաշրջանագիտություն	(բակալավրիատ/մագիստրատուրա)
3. Ժուռնալիստիկա	(բակալավրիատ/մագիստրատուրա)
4. Գովազդ և հանրային կապեր	(բակալավրիատ/մագիստրատուրա)
5. Ֆինանսներ և վարկ	(մագիստրատուրա)
6. Պետական և համայնքային կառավարում	(մագիստրատուրա)
7. Տնտեսագիտություն	(բակալավրիատ/մագիստրատուրա /ասպիրանտուրա)
8. Իրավագիտություն	(բակալավրիատ/մագիստրատուրա /ասպիրանտուրա)
9. Քաղաքագիտություն և տարածաշրջանագիտություն	(ասպիրանտուրա)
10. Կրթություն և մանկավարժական գիտություններ	(ասպիրանտուրա)
11. Մշակութաբանություն	(ասպիրանտուրա)

Ընդունելության քնությունների վերաբերյալ տեղեկատվությունը անմիջապես փոխանցվելու է դիմողների կողմից ներկայացված էլ. հասցեներին:

Կրթական ծրագրերին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ https://abiturient.mgimo.ru/foreigners հղմամբ:

<u>ԱՌԴԻՐ 2</u>

Դիվանագիտական ակադեմիան առաջարկում է կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով՝

<u>Մագիստրատուրա /առկա եղանակով/</u>

1. Տնտեսագիտություն /«Միջազգային տնտեսագտություն և բիզնես» ծրագիր/ (քննական առարկաներ՝ ռուսերեն /*գրավոր և բանավոր*/, օտար լեզու /*գրավոր և բանավոր*/, մասնագիտական առարկա /*գրավոր*/)
2. Իրավագիտություն /«Միջազգային հանրային իրավունք» և «Միջազգային տնտեսական իրավունք» ծրագրեր/ (քննական առարկաներ՝ ռուսերեն /*գրավոր և բանավոր*/, օտար լեզու /*գրավոր և բանավոր*/, մասնագիտական առարկա /*գրավոր*/)

<u>Մագիստրատուրա /հեռակա եղանակով/</u>

3. Կառավարում /«Արտաքին քաղաքականության գործունեություն և ռիսկերի կառավարում» ծրագիր/ (քննական առարկաներ՝ ռուսերեն /*գրավոր և բանավոր*/, օտար լեզու /*գրավոր և բանավոր*/, մասնագիտական առարկա /*գրավոր*/)

<u>Ընդունելության քննությունները կանցկացվեն հեռավար ձևաչափով ս. թ. հուլիսի 21-ից օգոստոսի 6-ը և նոյեմբերի 16-ից 21-ը</u>

<u>Ուսման տևողությունը՝ 2 տարի՝ առկա եղանակով և 2.5 տարի՝ առկա և հեռակա համադրված եղանակով:</u>

<u>Ասպիրանտուրա</u>

1. Քաղաքագիտություն (քննական առարկաներ՝ փիլիսոփայություն /*բանավոր*/, օտար լեզու /*գրավոր և բանավոր*/, մասնագիտական առարկա /*բանավոր*/),
2. Տնտեսագիտություն (քննական առարկաներ՝ փիլիսոփայություն /*բանավոր*/, օտար լեզու /*գրավոր և բանավոր*/, մասնագիտական առարկա /*բանավոր*/),
3. Իրավագիտություն (քննական առարկաներ՝ փիլիսոփայություն /*բանավոր*/, օտար լեզու /*գրավոր և բանավոր*/, մասնագիտական առարկա /*բանավոր*/),
4. Պատմական գիտություններ (քննական առարկաներ՝ փիլիսոփայություն /*բանավոր*/, օտար լեզու /*գրավոր և բանավոր*/, մասնագիտական առարկա /*բանավոր*/)

<u>Ընդունելության քննությունները կանցկացվեն հեռավար ձևաչափով ս. թ. սեպտեմբերի 6-ից 15-ը: Ուսման տևողությունը՝ 3 տարի:</u>